Երկնային Հոր Հետ Հարաբերությունների Բացակայության Հետևանքները

«Տեսեք՝ ինչպիսի՞սեր շնորհեց մեզ Հայրը, որպեսզի Աստծու որդիներ կոչվենք և իսկապես ենք.» Ա Հովհաննես 3:1

1. Իշխանության բացակայություն

«Որդին ինքն իրենից ոչինչ անել չի կարող, եթե չտեսնի այն, ինչ Հայրն է անում…» Հովհաննես 5:19

«Ահա ձեզ իշխանություն տվեցի ոտնակոխելու…թշնամու ունեցած ողջ զորությունը։» Ղուկաս 10:19

«Որովհետև դուք… որդեգրությա՛ն հոգին ստացաք…ապա նաև…Քրիստոսի ժառանգակիցներ, որպեսզի նրա փառքին էլ հաղորդակից լինենք։» Հռոմեացիներին 8:15-17

2- Ապահովության պակաս

«Բարձրյալի ծածկոցի տակ բնակվողը Ամենակարողի հովանու ներքո է հանգստանում։» Սաղմոսներ 91:1-2

«…որովհետև ձեր երկնավոր Հայրը գիտի, որ դուք այդ ամենի կարիքն ունեք։» Մատթեոս 6:31-32

«…ո՛չ էլ ստեղծված մի ուրիշ բան չեն կարող մեզ բաժանել Աստծու սիրուց։» Հռոմեացիներին 8:38-39

3. Հարգանքի պակաս

««Տղան մեծարում է իր հորը…եթե ես հայր եմ, ո՞ւր է իմ մեծարանքը…։» Մաղաքիա 1:6

««Պատվի՛ր քո հորն ու մորը…» Եփեսացիներին 6:2-3

«Բոլորին պատվե՛ք…։» Ա Պետրոս 2:17

4. Հայրը կարգուկանոնի և օրենքի պահապանն է

«Որովհետև Աստված խռովության Աստված չէ, այլ խաղաղության…։» Ա Կորնթացիներին 14:33

«Առանց տեսիլքի ժողովուրդը սանձարձակ կդառնա.» Առակներ 29:18

«Սովորեցրո՛ւ քո որդիներին, խոսի՛ր դրանց մասին քո տանը նստած ժամանակ, ճանապարհի գնալիս, պառկելիս և վեր կենալիս։» Բ Օրինաց 6:6-7

5. Անհրաժեշտ կարգապահություն և դաստիարակություն

«Որովհետև Տերն ում սիրում է, խրատում է.» Եբրայեցիներին 12:6

«…դաստիարակվածներին արդար խաղաղության պտուղ է տալիս։։» Եբրայեցիներին 12:11

«…Տերը հանդիմանում է, ում որ սիրում է…» Առակներ 3:11-12

6. Հայրական օրինակ

«Արդ Աստծուն նմանվե՛ք որպես սիրելի որդիներ։» Եփեսացիներին 5:1

«Արդ, դուք կատարյա՛լ եղեք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ։» Մատթեոս 5:48

««Սո՛ւրբ եղեք, որովհետև ես սուրբ եմ։» Ա Պետրոս 1:15-16

7- Իշխանության ներկայացուցիչների հետ ճիշտ հարաբերվելու անկարողություն

«Ամեն մարդ թող հնազանդվի իր վրա եղած իշխանություններին…» Հռոմեացիներին 13:1

«Ձեր առաջնորդներին անսացե՛ք ու հնազանդվե՛ք.» Եբրայեցիներին 13:17

«Որդինե՛ր, հնազա՛նդ եղեք ձեր ծնողներին Տիրոջով.» Եփեսացիներին 6:1

« Ոչ ոք Հոր մոտ չի գա, եթե ոչ իմ միջոցով։» Հովհաննես 14:6

«Ու ձեզ հայր կլինեմ, և դուք ինձ որդիներ ու դուստրեր կլինեք ասում է Ամենակալ Տերը։» Բ Կորնթացիներին 6:18

Թող մենք էլ կրկնենք աշակերտների աղոթքը

«Ցո՛ւյց տուր մեզ Հորը…» Հովհաննես 14:8

Հաջորդ Քարոզի Թեման

Խոր փոխհարաբերությունների գաղտնիքները

Հովիվ Սարօ Խաչիկեան